ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովաննիսյանի ուղերձը Տեղական ինքնակառավարման մարմինների օրվա առթիվ

10.11.2023

Հարգելի՛ գործընկերներ, ջերմորեն շնորհավորում եմ Տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր ներկայացուցիչներին մասնագիտական տոնի կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգը կարևոր դերակատարություն ունի մեր պետականության կայացման և հզորացման գործընթացում: Այս համակարգն ապացուցել է իր կենսունակությունն ինչպես համայնքների զարգացման, այնպես էլ երկրի առաջընթացի ապահովման գործում:

Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների արդյունավետ աշխատանքից է կախված մարդկանց կյանքի որակը համայնքներում, ուստի մեր քաղաքացիների արժանապատիվ կենսաձևի և ապագայի համար անհրաժեշտ է համայնքային մարմիններում ծառայություն մատուցողների ու քաղաքացիների համատեղ ու համերաշխ աշխատանք՝ հիմնված փոխօգնության ու փոխվստահության վրա:

Տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության կարևորագույն նախապայմանը մեր քաղաքացիների ակտիվ մասնակցությունն է որոշումների կայացմանը և իրականացմանը: Այսօր այդ ակտիվությունը որոշիչ գործոն է դարձել արդյունավետ տեղական իշխանության ձևավորման գործում:

Վստահ եմ՝ տեղական ինքնակառավարման համակարգի աշխատակազմն իր պատասխանատու աշխատանքով կշարունակի կատարել իր առջև դրված խնդիրները՝ հանուն համայնքներիի բնակիչների բարեկեցության և հետագա առաջընթացի:
Կրկին շնորհավորելով ՏԻՄ աշխատակիցներին տոնի առթիվ՝ մաղթում եմ բարեկեցություն և նորանոր հաջողություններ ձեր պատասխանատու առաքելության իրականացման գործում: